ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՄ

ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ

M. BENIARD
Poste Restante
Londres. [Angleterre].

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար։

Բերաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։

ՀԱՅԿ

ԲՈՂՈՔԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 ֆրանկ.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը։

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ	ԼՕՆԴՕՆ	Nr 12 ԱՊՐԻԼ Nr 12	1895	ՄԻԱՄԱԵԱՅ

ԲԱՍՏԻԼ.

Բաստիլ յայտնի է, այն սոսկալի բերդն էր Պարիզում, որ անցեալ դարում 89 թ. մայրաքաղաքի յեղափոխական ժողովուրդը կործանեց։ Բաստիլը ծառայում էր բանտի տեղ։ Նրանում բանտարկվել են շատ ֆրանսիացի նշանաւոր մարդիկ, որոնց մէջ և Վոլտերը։ Բաստիլը բանտ էր ֆրանսիական ազատութեան և մտքի համար։

Բայց մենք, հայերս, որ ֆրանսիացիներից ամեն կերպ շատ փոքր ժողովուրդ ենք և նրա ունեցած մեծ մարդկանց պէս հայ մարդկանց մասին երազում էլ դեռ չենք տեսնում, կարող ենք սակայն պարծենալ, որ մեր Բաստիլը շատ աւելի հսկայական ու զարհուրելի է, քան Պարիզինը։ Մեր ամբողջ երկիրն է մեր Բաստիլը։ Եւ նա բանտն է ոչ միայն հայոց մտքի — նորաբողբոջ միտք, — այլ բանտն է նաեւ մեր հոգեկան ու կենսական բոլոր առողջ երեւոյթների։ Մենք այնտեղ մտածել ենք կարողանում միայն մեր ցաւերի վրայ, ղգալ — միայն երկիւղի ու սարսափի նկատմամբ, աշխատել ու ապրել միայն վատերին կերակրելու համար և կերակրել վատերին — մեր սեփական մահը պատրաստելու համար։ Ահա դա է մեր կեանքը։

Եւ այդ սարսափելի Բաստիլը կործանելու համար է, որ տարիներից ի վեր ամեն գարնան մենք բացում ենք մեր աչքը և նկատում բնութեան շքեղ զգեստն իր կանաչ գոյնով, որ յուսոյ նշանն է։ Եւ դարերի ընթացքում կառուցված այդ Բաստիլը կարճ ժամանակում քանդելու պատրաստականութեամբ ոգեւորված ենք լինում, երբ յանկարծ նա ձմեռը ծածկվում է ձիւնի սպիտակ սաւանի տակ, ինչպէս մեռելն իր սպիտակ պատանքում։

Եւ հայ արիւնը հազարաւորների մարմնից հոսում է առատութեամբ. հայ գիւղ ու քաղաքները կուլ են գնում բոցերէն ծովում. հայ թարմ ոյժերը խեղդվում ու մահանում են յատուկ բանտերում, չարչարանքների մէջ և կախաղանի տակ։

Ժամանակն անցնում է, և ահա լսում ենք արդէն մեր Բաստիլի կործանման առաջին ճարճատիւնները... Կեցցէ՛ մահը, որ իրան ժառանգ է թողնում մի նոր կեանք... Այդ է բնութեան օրէնքը. մի մահը պէտք է փոխարինվէ մի կեանքով... Ողջոյն նոր կեանքին...

Եւ ամեն անգամ — եւ այսօր աւելի, քան երբ և է, — կասենք մենք. — Ողջոյն քեզ, գարուն, յաղթող բնութեան սառցային կապանքների, որ կաշկանդում ու մահացնում են բնութեան կենդանութիւնը։ Ողջոյն քեզ, գարուն, Աղատութեան դիցուհի, որ բնութեան ամենափոքր ոյժից սկսած մինչեւ մարդը — ամենքին վերակենդանացնում, վառում ես յոյսերով, զօրացնում աշխատանքի և առաւել զարգացման համար։ Ողջոյն քեզ, գարուն, որ քո այդ կախարդական զօրութեամբ մեզ տալիս ես նորանոր ոյժեր ու եռանդ կործանելու մեր դարեւոր Բաստիլը, որի հրդեհի կրակը շուտով կը միախառնվէ արշալոյսի առաջին հրավառ ճառագայթների հետ, որոնք բարձրանում են նոր կեանքի և վերակենդանացած երկրի վրայ։

ԳԱՅԼԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ.

Ընհաւատալի լուրին եթէ հաւատանք, սուլթանն իբր թէ կատաղած և իր ակռաները սրբեցնել այդ միջոցը մեր դիա՝ներով և մեր անշընչացած մարմինները պատուանդան դարձնել ապագայ սերնդի առաջնաղացութեան...

Այս նախաբանից յետոյ՝ խօսողն իր գրպանից հանեց թղթի մի ծրար, զգուշութեամբ բաց արեց և իր քրտինքը թաշկինակով սրբելուց յետոյ՝ շարունակեց.

— Մենք իսկապէս ցաւում ենք, որ մեր հէնց առաջին քայլին հանդիպում ենք ներքին թշնամիների և պարտաւորված ենք նախապէս վերացնել այդ վնասակար ցեցերին, պարզ խօսելով՝ ոչնչացնել մեր մատնիչներին։ Զը սրխալվելու համար մեր կարծիքներում և չը մեղանչելու համար մեր սկզբունքների դէմ, մենք ամենայն շրջահայեցութեամբ ստիպված ենք ընկնել այնպիսի անձերի հետքերի վրայ, որոնք բացորոշապէս գրաւում են մեր կասկածները. և ահա մեր յեղափոխական-լրտեսների ուշադրութեան շնորհով մենք այսօր դէմ առ դէմ ենք գանվում մէկ այնպիսի մարդու, որ իր վրայ կենտրոնացրած է գրեթէ ամբողջ հասարակութեան զզուանքն ու արհամարհանքը, բացի մի քանի հարուստներից, տաճիկ պաշտօնեաներից և կղերականներից, որոնց դասն է շալում և որոնք միշտ դաշնակցական կապերով միացած են միմեանց հետ իրանց ներքին շահերի և թաքուն խորհուրդների համար։

— Ահաւասիկ արդէն մէկ ամբողջ տարի է, որ մենք հաւաքել ենք, — սկսաւ տարիքն առած մէկ արհեստաւոր. — մենք խրատել ենք նրան, զգուշացրել և պէտք եղած ժամանակ սպառնացել. սակայն ցաւում ենք, որ միշտ նա միեւնոյնն է մնացել. խոստացել է, բայց իր խոստումը շոգիացել է իր մեծ քանակութեամբ խըմած օղիի հետ. նա երդվել է, բայց հաղիւ մի քանի օր անցած՝ դրժել է։ Նրանում բոյն են դրել գինեմոլութիւնը, անբարոյականութիւնը և մատնչութիւնը։ Այս վերջին ամիսներս մանաւանդ իմ լրտեսները նրան բռնել են ամենակեղտոտ անբարոյականութիւնների մէջ. նրա մատնութիւններն ահա այսօր բացարձակապէս պարզվում են մեր առջեւ։ Հետեւաբար, այդ իրական փաստերով համոզված՝ մենք այսօր պէտք է գործադրենք Դրագրի անողոք վճիռը և այդ վճիռը ոչ թէ միայն մենք, այլ ինքը մատնիչը իր ձեռքովը վաւերացրել է արդէն...

— Մենք կատարելով մի տէռորական գործողութիւն, ասաց նրանցից մէկ ուրիշը, հայ ժողովուրդը պէտք է ազատենք այնպիսի մէկ անձնաւորութիւնից, որ ահա ամբողջ եօթ, ութ և

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆԱՒԻԼԻ ՏԻԿԻՆ Մ. Ն... ԻՆ.

(Շարունակութիւն) *)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
II

ՎՃԻՌԸ.

— Այն վտանգաւոր աստիճանի վրայ, ուր գտնվում ենք, հէնց վերեւը կախված է ազատութեան մրցանակը։ Ջանանք բարձրանալ՝ դինված հանրամարդկային բարօրութեան նոր ու առաջադէմ գաղափարով, թէկուզ մեզ դլխին թշնամու սրերը, մեր կուրծքը խրվեն նրա գնդակները և սուլթանի արիւնաշաղախ ձեռքերը մեզ կախաղան բարձրացնեն։ Մենք կընկնենք փառաւոր մահով, քաջի, նահատակի մահով։ Եթէ մեզ համար վիճակված չէ ազատութեան մրցանակը և չենք կարող այլ ևս վեր բարձրանալ այդ աստիճաններից, մեզ կը մնայ լրջ-

*) Տես «Ապտակի» Nis 7—11.

մի կեանքով... Ողջոյն նոր կեանքին...

Եւ ամեն անգամ — եւ այսօր աւելի, քան երբ և է, — կասենք մենք. — Ողջոյն քեզ, գարուն, յաղթող բնութեան սառցային կապանքների, որ կաշկանդում ու մահացնում են բնութեան կենդանութիւնը։ Ողջոյն քեզ, գարուն, Աղատութեան դիցուհի, որ բնութեան ամենափոքր ոյժից սկսած մինչեւ մարդը — ամենքին վերակենդանացնում, վառում ես յոյսերով, զօրացնում աշխատանքի և առաւել զարգացման համար։ Ողջոյն քեզ, գարուն, որ քո այդ կախարդական զօրութեամբ մեզ տալիս ես նորանոր ոյժեր ու եռանդ կործանելու մեր դարեւոր Բաստիլը, որի հրդեհի կրակը շուտով կը միախառնվէ արշալոյսի առաջին հրավառ ճառագայթների հետ, որոնք բարձրանում են նոր կեանքի և վերակենդանացած երկրի վրայ։

բած է հազարաւոր սասունցիների սպանիչ թահ-սին փաշայի դէմ... երեւի նրա համար, որ այդ փաշան չը կարողացաւ իր գաղանութիւնները վարպետութեամբ տանել... Բայց պառաւ գայլն ակռայ չունի կատաղութեան մէջ խածնելու իր փաշային և, ի հարկէ, գոհ կը մնայ, երբ այս վերջինը նրա ոտները մէկ աւելորդ անգամ էլ լիզէ, մի բան, դէպի որը նա առանձին հաճոյք է զգում... Փառապանծ փաշայ, վզից կախված է շքանշանը... թոկի փոխարէն...

*

Բարեկամական խօսակցութիւն Սասունի կոտորածին մասնակցող հերոս թիւրք զինուորների ու սպաների մէջ.—

1-ին սպայ.—Գեավուրի ալիւնից եմ դուրս գալիս՝ Մուհամմէտի դրախտին արժանանալու...

Ամենքը.—Իշալլահ, մաշալլահ... վեհ. սուլթանի շնորհով։

2-դ սպայ.—300 գեավուր խողխողեցինք՝ խաբելով և խոր հորերում նետեցինք, Մուհամմէտի անէծքը կարդալով նրանց գլխին...

Ամենքը.—Իշալլահ... վեհ. սուլթանի շնորհով

1-ին զինուոր.—Ես իմ ձեռքովս 16 գեավուր սպանեցի և նրանց մարմինները կտոր-կտոր անելով, շներին տուի։ Փոխարէնն իմ՝ սպայից շքանշան ստացայ։

Ամենքը.—Մաշալլահ,՝ կեցցես... վեհ. փատիշահի շնորհով։

2-դ զինուոր.—Ութ ծեր գեավուր մորթեցի և 25 մանուկների գլուխները ջախջախեցի քարերով, որ այդ անիծեալ ցեղը վերանայ... Փաշան ասաց՝ „Աֆերիմ... կողոպտած դրամներդ քեզ նուէր“...

Ամենքը.—Հուրրա՛. կեցցէ՛ փաշան.... վեհ. փատիշահի շնորհով։

3-դ զինուոր և 3-դ սպայ միասին.—Իսկ մենք 7-ը յղի կիների արգանդը պատռեցինք՝ պըղծելէն յետոյ, մանուկները մորթեցինք նրանց վերայ, շատ կոյս աղջիկներ և տղաքներ բռնաբարեցինք...

Ամենքը.—Իշալլահ... միշտ այդպէս... վեհ. փատիշահի շնորհով։

4-ը զինուոր.—Ես էլ արի այդպէս...

5-դ զինուոր.—Ես էլ պառաւներ մորթեցի, ոսկիներ կողոպտեցի...

6-դ զինուոր.—Ես էլ...

Ամեն կողմից լսվում է միայն.—Ես էլ բըռնաբարեցի... ես էլ այրեցի տներ... ես էլ կողոպտեցի... ես էլ սպանեցի, մորթեցի...

Ամենքը միաձայն, ոգեւորված.—Վեհ. փատիշահի շնորհով... կեցցէ՛ փատիշահ... կեցցէ՛...

Արդարեւ, վեհ. փատիշահի շնորհն անպակաս է, և ասել, թէ նա բարեսիրտ չէ... Բայց... կեցցէ՛ն մորթվածները...

*

Այո՛, սուլթանի բարեսրտութիւնները նոյնքան մեծ են, որքան նրա սրտի... ու ոտքի չափը։

*

Եւրոպայի տէրութիւնների կողմից ներկայացված „Բարենորոգումների Նախագիծը“, ինչպէս հաղորդում են Եըլդըզի պալատից, „խորին քննութեան և սուլթանի մինիստրների մէջ անհամաձայնութեան առարկայ է դարձել“։ Քննութի՞ւն... անհամաձայնութի՞ւն... փա՛ռք... խելք սուլթանը, սիրաւի, ամբողջ աշխարհը արդեն մարդ է կարծել, որ ուզում է ցոյց տալ, թէ ինքն և իր մինիստրները լուրջ մարդիկ են և գիտեն քննել ու անհամաձայն լինել...

*

Սուլթանը Մուհամմէտի դրախտային հաճոյքների քնից նոր զարթնած, հազիւ նստում է իր „թախտի“ վրայ, երբ նրան հաղորդում են, թէ մեծ-եպարգոսն ուզում է նրան տեսնել... Մտնում է մեծ-եպարգոսը եւ սովորական սէլամներից յետոյ՝ կակազում հազիւ լսելի ձայնով.—„Վեհ. փատիշահ, ես ձեր խոնարհ ծառայ, ձեր շնորհովն ու շուքովը հովանաւորված եւ ձեր կոշիկների փոշի... Կայսրութիւնը վտանգի մէջ է... Եւրոպան Հայաստանի խնդիրն օրակարգի է դրել... գեավուր խուվարարներն էլ հանգիստ չունեն“...

Սուլթանը (բարկացած).—Կոտորել...

Մեծ.-եպարգոս (նոյնութեամբ).—Եւրոպան..

Սուլթանը.—(ընդմիջելով, անհամբեր).—Կո... տո... րե՛լ...

Մեծ. եպարգ. (ապշած).—Եւրոպան կոտորե՞լ... Ձերդ վեհափառութեան խօսքը ձեր խոնարհ ծառան չէ հասկանում...

Սուլթանը (նոյնութեամբ. կատաղած).—Հրամանս կատարել... կոտորել։

Մեծ եպարգ. (յուսահատաբար. արագաբար).—Եւրոպա՞ն կոտորել... ինչպէս... Եւրոպան ձերդ վեհափառութիւնէն կը պահանջէ գործադրել բարենորոգումներ Հայաստանում... թո՛ղ ձերդ վեհափառութիւնը ունկընդիր լինի ձեր խոնարհ ծառային...

Սուլթանը (բարկացած).—Չեմ ուզում...

Մեծ. եպարգ.— Բարենորոգումներ...

Սուլթանը (կատաղած. ընդմիջելով).—Չեմ ու... զո՛ւմ...

Մեծ.-եպարգ. (շփոթված, ապշած, երկիւղով).—Բայց Եւրոպան...

Սուլթանը (նոյնութեամբ, աւելի բարձր ձայնով).—Չեմ ու... զում... չէ՛...

Մեծ.-եպարգ. (արագաբար. յուսահատաբար).—Եւրոպան պատերազմ կը յայտարարէ եւ կայսրութիւնը Բաղդադ կուղարկէ...

Սուլթանը (կատաղութիւնն իսկոյն իջնում է. յօնքերը կիտած, մտածելով).—Պատերազմ... Բաղդադ... հը՛մ... այո... շարուխներն էլ պատրաստ են...

Մեծ.-եպարգ.—(օգուտ քաղելով բարեպատեհ րոպէից).—Այո՛, այո... Ձերդ վեհափառութեան շնորհով ճանապարհն էլ հարթ եւ լաւ շինված է դէպի Բաղդադ ճանապարհորդելու... Պատերազմը...

Սուլթանը (նոյնութեամբ).—Բաղդադ... ճանապարհորդութի՞ւն... (մեծ-եպարգոսին) Ասա՛, թէ կը պատասխանեմ յետոյ...

Մեծ. եպարգ.—Բայց դեսպանները պահանջում են շուտով պատասխանել...

Սուլթանը (սկսելով բարկանալ).—Յետոյ...

Մեծ. եպարգ.(շփոթված).—Բայց...

Սուլթանը (բարկացած).—Յետոյ... թող սպասեն Եավաշ-եավաշ...

Մեծ. եպարգ. (շփոթութիւնից մտքի թելը կորցնելով. արագաբար).—Բաղդադ... Եավաշ-եավաշ... պատասխանն անմիջապէս են ուզում...

Սուլթանը (հանդարտվելով, մտածման մէջ, յետոյ զառանցելով)... Այո... Բաղդադ... պատասխանիր, թէ ես մտածում եմ... մտածեմ քիչ... Եավաշ-եավաշ... Չեմ ուզում... Մուհամմէտի դրախտային հաճոյք... Հը՛մ... Բաղդադ... Այո՛... Չէ... Եավաշ-եավաշ... կը խաբեմ... կանեմ—չեմ անիլ...

Մինչ սուլթանը զառանցում էր, մեծ-եպարգոսը նրան լսում էր ուշադրութեամբ... Վերջը գոհ ու փայլուն դէմքով, ասես բեռից ազատված, թեթեւաշարժ կերպով խոնարհվելով սուլթանի առջեւ, կամացուկ սահում է դռնից դէպի դուրս...

ԸՕՂԻ

„Ապտակի“ ներկայ համարով աւարտվում է նրա հրատարակման առաջին տարեշրջանը։ Մեր այն բաժանորդները, որոնք յանկանում են նորոգել իրանց բաժանորդավճարն „Ապտակի“ երկրորդ տարեշրջանի համար, հրաւիրվում են կանխապէս անել այդ։

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ

„Ապտակի“ Nr 11-ում, „Արեւածագին“ գրվածքում, սիւնակ 8, տող 28 տպագրված է, „որ մարդու համար“ և այլն. պէտք է լինի՝ „որ ամբողջութեամբ իր կոչումն ըմբռնող մարդու համար“ և այլն։

ԼՕՆԴՕՆ· „ՀՆՉԱԿ“-Ի ՏՊԱՐԱՆ·

III

ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՄ.

Դէշիլ-Ըրմագի վճիտ ալիքներն ընթանում էին լուսնի գալկահար լոյսի տակ։ Նրանք երբեմն ուռչում էին եւ բարկութեամբ բախվում ջաղացքների եւ ջրահան մեքենաների հսկայ անիւներին, որոնք յանդգնել էին կտրել նրանց հոսանքների ճանապարհը։ Ա... քաղաքը նիրհում էր. նիրհում էր նա ապառաժների խորքում։ Փողոցային լապտերները շատ աղօտ լոյս սփռելով իրանց շրջանակում, երեւան էին հանում պատահական նկարներ. նրանց լոյսերը պլպլում էին խոր ձորերին յատուկ քամի աղդեցութիւնից. նրանց թռչած ստուերները եղ եւ էջեր էին անում, խաղում, գիշերային ուրուականների պար կազմում։ Քաղաքի արեւմտեան կողմը, ահագին սեպաձեւ ապառաժների գլխին, երեւում էր հսկայ բերդը. մերկացած իր նախկին փայլերից, տներից ու պարիսպներից՝ նա ներկայացնում էր մէկ ընդարձակ աւերակ, որը նմանում էր մարդկային կմախքի։ Նրա փողերի վրայ մերթ բարձրանում էին կիսատ շէնքեր իրանց փլած պատերով, որոնք ժամանակի ազդեցութիւնից ստացել էին ատամի ձեւ եւ ձգվում էին դէպի վեր։

(կը շարունակվի) ՎԻԹ.

աւելի տարիներ անպատեալ է նրան ամեն տեսակէտից. բաց գտնելով իր առջեւ ազատ ասպարէզ, նա անսանձ ասպատակել է աջ ու ձախ, չարաչար գործածելով ժողովրդի վստահութիւնը։ Դա, այդ ձայնաւոր տիրացուն, եկեղեցական արարողութեան մէջ կատարելով մի յայտնի դեր և իր գեղեցիկ ձայնով մի ժամանակ իր վրայ կենտրոնացնելով ամբողջ հայ հասարակութեան ուշադրութիւնը, դարձաւ այլ ևս մի շփացած տղայ, ամեն տեղ մուտք է գործում և միշտ իր նպատակն է եղել ոչնչացնել, ինչ որ սուրբ է, անպատեալ, ինչ որ նուիրական է, ինչ որ պաշտելի է և միաժամանակ յագեցնել իր անարգ, ստորաքարշ կրքերը։։ Այսօր էլ միևնոյն հերոսն է, որ ապաստանած է թիւրք բռնակալութեան ներկայացուցիչների, միլէթսարրաֆների և նրանց ստորադասեալների հովանաւորութեան տակ, ուզում է աւելի և աւելի ընդարձակել իր գործունէութեան ասպարէզը։ Եւ իրաւ որ մասամբ աջողեցաւ իր այդ ձեռնարկում և ահա այսօր այդ կեղտոտ մարդու շնորհու բանը լցվել է անմեղներով։ Նրա համար գանգատվում է ոչ թէ միայն հայ հասարակութիւնը, այլ և թիւրքերը, որոնց մէջ ևս սկսել է նա միևնոյն դերը խաղալ, և ընդհանուութիւնը աչքաբաց սպասում է յեղափոխական գնդակին կամ դաշոյնին, որ պէտք է, վերջապէս, վախճան տայ այդ մարդու կեանքին, որ ապրել է միայն և միայն վնասելու նպատակով։ Հէնց այդ պատճառով է, որ ես գալիս եմ իմ նախորդ խօսողների եզրակացութեան. մահ մատնիչին։

Նրանց խորհրդածութիւնները տեւեցին ժամերով։ Արեւն արդէն սկսել էր հաւաքել իր վերջին ճառագայթները, ծառերի կանաչ տերեւների վրայ դեռ նշմարվում էին նրա կարմիր հետքերը, որոնք սկսել էին կամաց-կամաց չքանալ։ Իրիկնադէմի բարակ զով քամին համբակվում էր կարծես այլ ևս վայր իջնել Ադ-Դաղի բարձունքից և մի քիչ կենդանացել արեւից խանձված տերեւները։

Մեր եօթը անձերը դեռ նշմարվում էին միևնոյն սեղանի շուրջը. վերջապէս նրանցից մին կարդաց բոլոր լրտեսների ընդհանուր տեղեկագիրը, որ գալիս էին միևնոյն տխուր եզրակացութեան... Ի վերջոյ Նրանք միաձայն որոշեցին ոչնչացնել այն անձին, որ պատիժ էր դարձել Ա... քաղաքի ընդհանուր հասարակութեանը...

ԿԸԵԽԱԼԸ.

Այդպէս հրաշք մը չէր եղած,
Որ կըմախքը գեռ ապրէր
Եւ խեղդուած տակն իր մեղաց՝
Կեանքըն այլոց միշտ ափռէր։

Աբեւելեան երկիրներէն
Թափառական գինեվաճառը
Եկան, անցան շատ տեղերէն,
Մինչ Վէննայի մօտերը։

*

Ամենայն տեղ պրկեն աչեր
Արշաւանքով վայրենի,
Ըստեղծեցին անթիւ ցաւեր,
Գարձան գալ ու բարենի։

*

Օսմանլիի անուն առին,
Երկիրն ասին՝ Թիւրքիա
Եւ բռնացան ողջ աշխարհին՝
Վէննայից մինչ Սանֆկա։

*

Այսպէս անցաւ քանի մը դար
Սէջլեն արեան հեղեղի.
Կը սպառէին միշտ, անդադար
Աղգերն Թիւրքէն կոտորի։

*

Բայց օր մ'Հասաւ. քաշամարտիկ
Աղգ մը եկաւ նորա դէմ,
Անկէ եաթը մէկիկ մէկիկ
Շատ ազգ անցաւ կուր քեմ։

*

Թիւրքը գարձաւ ալ հիւանդ մարդ՝
Կեռուած անցոյս ախտերով,
Կը պատժէր գազանն տրմարդ
Իր յոռետեան կեղտերով։

*

Եւ նա քսկաւ փըտիլ նեխիլ
Թեւէն, կրծքէն ու ոտքէն.
Դամաց-կամաց սրմատախիլ
Կըլլար հիւանդն—իր մեղքէն։











*

Նորա նեխման զարիր հոտը
Կապականէր այլոց հոտը,
Կը վարակէր այդ բորոտը
Իր ողջ մարմին թափթըփող։

*

Աբեւելեան աշխարհներէն
Շատ կախարդներ նա կոչեց,
Թալիսմաններ վըհուկներէն
Նա շատ առաւ, հաւաչեց։

*

Սակայն փըտող թեւ, կուրծք, ոտքեր
Պրնար ալ մէկը բուժել.
Կը բացուէին միշտ նոր վէրքեր—
Պէտք էր պատիժը տուժել։

*

Աբեւմտեան տերութիւններ
Մեծ բժիշկներ ղրկեցին.
Տեսան հիւանդն այդ գիտուններ,
Ընդաժ'հատել վճռեցին։

*

Բայց ամենէն թանկագինը՝
Նորա գլուխը՝ կը պահեն,
Իբր օրինակ պատմութեանը,
Թէ կը հոտէր նա գլխէն։

*

Դամաց-կամաց և մաս առ մաս
Ազգեղ կըմախք կը դառնար,
Բայց միշտ դարձեալ ցեցի վընաս
Խեղճ ազգերին նա կըտար։

*

Այժմ նորա վիղէն կախուած՝
Պիտ կըտրուի Հայաստան,
Վերջ՝ Մակեդոն, Կրէտէն քաշաց...
Դժոխքը դառնայ բուրաստան։

*

Բայց հիւանդին միշտ սեփական
Իր չարուխներ պիտ թողուն,
Որ հեռանայ թափառական
Մինչեւ գաղդաղ՝ իրը սողուն։

Այդպէս հրաշք բայց չէր եղած,
Որ կըմախքը գեռ ապրէր
Եւ խեղդուած տակն իր մեղաց՝
Կեանքըն այլոց գեռ ափռէր.

19 Ապրիլ 95. ԽԵՆԹԸ.

ԹԻՐՔԻԱՅԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ